ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ

15 ապրիլի, 2020 N 42

ՊԱՐԵՏԻ 2020թ. ՄԱՐՏԻ 20-Ի ԹԻՎ 7 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020թ. մարտի 16-ի 298-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետով՝

1. «Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու առանձնահատուկ և անհետաձգելի դեպքերը սահմանելու մասին» Պարետի 2020թ. մարտի 20-ի թիվ 7 որոշման 1-ին մասի «կամ հոգեհանգստի կամ թաղման արարողությանը մասնակցելու նպատակով՝ հանգուցյալի մերձավոր ազգականներին: Սույն որոշման իմաստով մերձավոր ազգական են համարվում հանգուցյալի ծնողները, ամուսինը, կինը, երեխաները, քույրը և եղբայրը՝ համապատասխան հիմնավորումներ ներկայացվելու պարագայում:» բառերը հանել:
2. ՀՀ արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականյանին, ՀՀ ոստիկանության պետ Արման Սարգսյանին, ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի հրամանատար Վաղինակ Սարգսյանին, ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Հակոբ Ավագյանին՝ սույն փոփոխություններն ընդունել ի գիտություն:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման պահին:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 16/04/20 21:30:02 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

Տ.ԱՎԻՆՅԱՆ